ԱՐԱՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ
ՀԱՄԿ·ԿՊԱ·CTUA·ՀԱՄԿ

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՓԵՏՐՎԱՐ 2024

#2

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», «Կրթության մասին» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունները

ՀԱՄԿ-ը բարձրաձայնել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կենսաթոշակառուների իրավունքների վերաբերյալ մի շարք հարցեր

ՀԱՄԿ-ի գրությունը Երևանի քաղաքապետին հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ

ՀԱՄԿ-ի գրությունը ՀՀ Վարչապետին հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ

Սոցիալական արդարության համաշխարհային օր

Երևանի քաղաքապետարանի պատասխանը ՀԱՄԿ-ի՝ հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ գրությանը

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աջակցությամբ Արցախից բռնի տեղահանված և Հայաստանում աշխատողների արհեստակցական կազմակերպության հիմնադիր համաժողովը

3F Ինթերնեյշնելի խորհրդատու Տոբիաս Բավնսգաարդի այցելությունը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Սեմինար Հայաստանի տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար

Բարի գալուստ,
«Արհմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», «Կրթության մասին» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունները

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ներկայացրել է ՀՀ Ազգային Ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանին «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», «Կրթության մասին» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ իր առաջարկությունները։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «գործատուների» բառից հետո առաջարկվում է լրացնել «աշխատողների ներկայացուցիչների (արհմիությունների)» բառերով և դիտարկել համապատասխան առաջարկությունը Նախագծի մյուս հոդվածներում փոփոխություն և լրացում կատարելու համար:

Հիմնավորում.

Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության 2023 թվականի հունիսի 16-ին ընդունված «Աշկերտության որակյալ ծրագրերի մասին» № 208 հանձնարարականի 9-րդ կետի՝

«Անդամները պետք է գործատուների և աշխատողների ներկայացուցչական կազմակերպությունների մասնակցությամբ ներդնեն գործընթաց՝ որոշելու, թե արդյոք մասնագիտությունը հարմար է որակյալ աշկերտության համար՝ հաշվի առնելով.

ա) այդ մասնագիտության մեջ աշխատելու համար անհրաժեշտ կարողությունները,

բ) աշկերտության նպատակահարմարությունը՝ որպես այդպիսի կարողությունների ձեռքբերման միջոց,

գ) նման կարողություններ ձեռք բերելու համար պահանջվող աշկերտության տևողությունը,

դ) այդ մասնագիտության հմտությունների և զբաղվածության ներկա և ապագա պահանջարկը,

ե) գործատուների և աշխատողների կազմակերպությունների մասնագիտական, վերապատրաստման և աշխատաշուկայի փորձաքննությունը,

զ) զարգացող մասնագիտական ոլորտների և զարգացող արտադրական գործընթացների և ծառայությունների լայն շրջանակը:

Հիմք ընդունելով վերը նշված Հանձնարարականի 10-րդ, 25-րդ, 27-րդ կետերը[1]՝ անդամ պետությունները գործատուների և աշխատողների ներկայացուցչական կազմակերպությունների հետ խորհրդակցությունների միջոցով պետք է սահմանեն մասնագիտության հատուկ կամ ընդհանուր ստանդարտներ որակյալ աշկերտության համար, միջոցներ ձեռնարկեն՝ ստեղծելու բարենպաստ միջավայր որակյալ

[1] https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R208

աշկերտությունը խթանելու, ոչ ֆորմալից ֆորմալ տնտեսության անցումը հեշտացնելու համար:

Համաձայն Եվրոպական կրթական հիմնադրամի՝ «սոցիալական գործընկերներ» եզրույթը վերաբերում է արհմիություններին և գործատուների կազմակերպություններին: Սոցիալական գործընկերները մասնակցում են ինչպես քաղաքականության մշակմանը, այնպես էլ Եվրոպական կրթական հիմնադրամի գործընկեր երկրներում գործնական ուսուցման ապահովմանը: Նրանք ներգրավված են համակարգի տարբեր մակարդակներում (ազգային, տարածաշրջանային և տեղական): Հատկապես մասնագիտական ուսուցման համար կարևոր է, որ կառավարությունները, գործատուները և արհմիությունները զարգացնեն իրենց կարողությունները՝ համատեղ աշխատելու մասնագիտական կրթության և վերապատրաստման քաղաքականության մշակման և իրականացման գործում:[2]

Միաժամանակ, հարկ է նշել, որ եռակողմ սոցիալական գործընկերության՝ Կառավարության, գործատուների և արհմիությունների համատեղ աշխատանքի միջոցով է հնարավոր կրթությունը և ուսուցումը համապատասխանեցնել հասարակության և տնտեսության պահանջներին: Սոցիալական գործընկերները ներկայացնում են աշխատաշուկան և տիրապետում են աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխություններին և կարիքներին, որի արդյունքում կարող են Կառավարությանն աջակցել կրթական և ուսուցման ծրագրերի մշակմանը և կատարմանը:

2. 15-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված աշկերտության պայմանագրի բովանդակությունն առաջարկվել է համապատասխանեցնել Աշխատանքի միջազգային կազմակերպության 2023 թվականի հունիսի 16-ին ընդունված «Աշկերտության որակյալ ծրագրերի մասին» № 208 Հանձնարարականի 18-րդ կետին[3]:

3. 15-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում մինչև տասնութ տարեկան աշկերտի ներգրավման հնարավորությունը գտնում ենք, որ անթույլատրելի է, քանի որ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» թիվ 182-րդ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ «Սույն Կոնվենցիայի նպատակների համար «երեխա» եզրույթը կիրառվում է մինչև 18 տարեկան բոլոր անձանց նկատմամբ», իսկ 3-րդ հոդվածի «դ» ենթակետը՝ «Սույն Կոնվենցիայի նպատակների համար «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը» եզրույթն ընդգրկում է՝
դ)աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:»:

---

[2]https://www.etf.europa.eu/sites/default/files/m/45A9C75B6AA860E1C1257B6C0056EB64_INFORM_15_Social%20partners.pdf

[3] https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R208

Համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված) 7-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ մասերի՝

«Կողմերը պարտավորվում են՝

2. աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 18 տարեկանը՝այն ընդունված աշխատանքների առնչությամբ, որոնք համարվում են վտանգավոր կամ վնասակար են առողջությանը,
8. ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք չկատարեն գիշերային աշխատանք, բացառությամբ ազգային օրենքներով կամ կանոնակարգերով սահմանված որոշակի աշխատանքների»:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «սոցիալական գործընկերություն» եզրույթում առաջարկվում է ներառել «աշխատողների ներկայացուցիչներին (արհմիություններին)»՝ հաշվի առնելով «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից ներկայացված առաջարկությունները և դիտարկումները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածով սահմանված բացառությունն առաջարկվում է հանել, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված են մի շարք երաշխիքներ՝ սահմանելով բացառություն կխախտվեն անչափահաս աշխատողների աշխատանքային իրավունքները:

ՀԱՄԿ-ը բարձրաձայնել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կենսաթոշակառուների իրավունքների վերաբերյալ մի շարք հարցեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

ՆԱԽԱԳԱՀ

0010, Երևան, Վ. Սարգսյան 26/3, հեռ.՝ (010) 54 52 37, էլ. հասցե՝ hamk@hamk.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1.1. կետի համաձայն՝ «1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը՝

1) աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ և

2) սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի»:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային գրքույկում աշխատանքային ստաժի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում սոցիալական վճարներ կատարելու կամ աշխատավարձ ստանալու վերաբերյալ փաստաթղթերի պարտադիր պահանջը իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ է առաջացնում, քանի որ շատ դեպքերում գործատուների կողմից նշված փաստաթղթերը Հայաստանի ազգային արխիվ պահպանության չեն հանձնվել: Արդյունքում, քաղաքացիները ոչ իրենց մեղքով զրկվում են որոշ տարիների համար իրենց հասանելիք աշխատանքային ստաժից: Որոշակի տարիների համար աշխատանքային ստաժից զրկվելով կենսաթոշակի տարիքի հասած անձինք զրկվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքից, այն է՝ «Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն (.....) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

Նույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կենսաթոշակ վճարելը դադարեցվում է՝

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում.

2) կենսաթոշակառուին (կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին) տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.

2.1) եթե կենսաթոշակը վճարվում է լիազորագրով (ներկայացվել է կենսաթոշակը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու կամ կենսաթոշակը տասներկու ամիս անընդմեջ լիազորագրով վճարելու կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուամսյա ժամկետը լրանալու դեպքում.

2.2) եթե անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուն տասներկու ամիս անընդմեջ բացակայում է Հայաստանի Հանրապետությունից (կենսաթոշակը կենսաթոշակառուի օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին վճարվելու դեպքում).

3) սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից չհաստատվելու) դեպքում»:

Հարկ ենք համարում նշել, որ կենսաթոշակի վճարումը դադարեցնելը հակասում է Սահմանադրության 83-րդ հոդվածին՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել»:

Նշված հոդվածի համաձայն չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միայն նախորդ մեկ տարվա համար, մինչդեռ կենսաթոշակառուների կողմից աշխատանքային տարիների ընթացքում սոցիալական վճարները կատարվել են աշխատած բոլոր տարիների համար:

Հաշվի առնելով վերոնշվածը և այն հանգամանքը, որ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա նշված խնդիրներով դիմում են բազմաթիվ քաղաքացիներ՝ խնդրվում է Ձեր նախաձեռնությունը նշված հարցերին լուծում տալու համար:

ՀԱՄԿ-ի գրությունը Երևանի քաղաքապետին հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

Ն Ա Խ Ա Դ Ա Հ

0010, Երևան, Վ. Սարգսյան փող.26/3, հեռ.՝ (010) 54 52 37, էլ. փոստ՝ hamk@hamk.am

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան իր մտահոգությունն է հայտնում Երևանում նախատեսվող հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման կապակցությամբ, որն անշուշտ ծանր սոցիալական հետևանքներ կունենա բնակչության տարբեր խմբերի համար:

Սոցիալական ճգնաժամի խորացումն անխուսափելի է բոլոր տեսակի թանկացումների դեպքում, որին հաջորդում է աշխատողների, նրանց ընտանիքների անդամների և ողջ բնակչության կենսամակարդակի անկումն ու անապահով ընտանիքների քանակի աճը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության բնակչության 24.8 % աղքատ է: Աղքատների շրջանում կան նաև աշխատող աղքատներ, ովքեր անգամ աշխատանք ունենալով չեն կարողանում ապահովել իրենց և իրենց ընտանիքի անդամների նվազագույն պահանջմունքները:

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2023թ. IV եռամսյանկի դրությամբ 741 571 աշխատողներից 521 318-ը աշխատում են Երևանում, հետևաբար նրանց զգալի մասն օգտվում է հասարակական տրանսպորտից:

Հարկ ենք համարում նշել, որ հանրապետության տնտեսության 19 ոլորտներից 15 ոլորտներում (մշակույթ, կրթություն, առողջապահություն, մեծածախ և մանրածախ առևտուր և այլն) աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2023թ. նոյեմբերի դրությամբ հանրապետության 274 066 դրամ կազմող միջին ամսական անվանական աշխատավարձի չափից ցածր է:

Հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումը բացասական ազդեցություն է թողնելու աշխատողների զգալի մասի եկամուտների վրա, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չի կիրառվում 2004թ. ընդունված ՀՀ աշխատանքային

օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջը՝ «Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Չի կիրառվում նաև դեռևս 2004 թվականին ընդունված «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-ժողովրդագրական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը, սկսած 2004թ.-ից պետք է հաշվարկվեր ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով մշակվող և նրա կողմից հաստատած մեթոդական հանձնարարականների հիման վրա:

Կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը պետք է հիմք հանդիսանար նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման համար, իսկ նրանց մեծության միջև համամասնությունները յուրաքանչյուր տարի պետք է արտացոլվեին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում:

Տրանսպորտի ուղեվարձի թանկացումը կհանգեցնի աղքատության մակարդակի բարձրացմանը, որի հետևանքով ծանր իրավիճակում կհայտնվեն ոչ միայն աշխատողները, այլ նաև ուսանողները, որոնց զգալի մասը ուսում են ստանում Երևանում և նույնպես օգտվում են հասարակական տրանսպորտից:

Հարկ ենք համարում նշել նաև, որ հասարակական տրանսպորտի համակարգում կատարված փոփոխություններից հետո հասարակական տրանսպորտը դեռևս չի ապահովում քաղաքացիների համար սպասարկման բավարար որակ:

Բոլոր քաղաքակիրթ երկրներում հարկատուների կողմից վճարված հարկերի հաշվին են լավարկվում տրանսպորտային միջոցները և դրանց ցանցը: Ուստի, անընդունելի է ազգաբնակչության ուսերին լրացուցիչ բեռ դնելը, որը կհանգեցնի քաղաքացիների շրջանում լրացուցիչ սոցիալական լարվածության առաջացմանը:

ՀԱՄԿ-ի գրությունը ՀՀ Վարչապետին հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

Ն Ա Խ Ա Դ Ա Հ

0010, Երևան, Վ. Սարգսյան փող.26/3, հեռ.՝ (010) 54 52 37, էլ. փոստ՝ hamk@hamk.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Վարչապետ,

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան իր մտահոգությունն է հայտնում Երևանում նախատեսվող հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման կապակցությամբ, որն անշուշտ ծանր սոցիալական հետևանքներ կունենա բնակչության համար:

Սոցիալական ճգնաժամի խորացումն անխուսափելի է բոլոր տեսակի թանկացումների դեպքում, որին հաջորդում է աշխատողների, նրանց ընտանիքների անդամների և ողջ բնակչության կենսամակարդակի անկումն ու անապահով ընտանիքների քանակի աճը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության բնակչության 24.8 % աղքատ է: Աղքատների շրջանում կան նաև աշխատող աղքատներ, ովքեր անգամ աշխատանք ունենալով չեն կարողանում ապահովել իրենց և իրենց ընտանիքի անդամների նվազագույն պահանջմունքները, քանի որ Հայաստանի Հանրապետությունում նվազագուն աշխատավարձ սահմանելիս հաշվի չի առնվում դեռևս 2004թ. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» թիվ 131 կոնվենցիայի 3-րդ հոդվածի ա) կետի պահանջը, այն է՝ նվազագույն աշխատավարձի սահմանման ժամանակ պետք է հաշվի առնվեն՝ «… ա) աշխատողների և նրանց ընտանիքների պահանջմունքները՝ ուշադրություն առնելով երկրում ընդունված աշխատավարձի ընդհանուր մակարդակը, կենսապահովման նվազագույն ծախսերը, սոցիալական նպաստները և այլ սոցիալական խմբերի կյանքի համեմատական մակարդակը, ...»:

Հայաստանի Հանրապետությունում 2023թ. IV եռամսյանկի դրությամբ 741 571 աշխատողներից 521 318-ը աշխատում են Երևանում, հետևաբար նրանց զգալի մասը օգտվում է հասարակական տրանսպորտից:

Հարկ ենք համարում նշել, որ հանրապետության տնտեսության 19 ոլորտներից 15 ոլորտներում (մշակույթ, կրթություն, առողջապահություն, մեծածախ և մանրածախ առևտուր և այլն) աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2023թ.

նոյեմբերի դրությամբ հանրապետության 274 066 դրամ կազմող միջին ամսական անվանական աշխատավարձի չափից ցածր է:

Տրանսպորտի ուղեվարձի թանկացումը բացասական ազդեցություն է թողնելու աշխատողների զգալի մասի եկամուտների վրա, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չի կիրառվում նաև 2004թ. ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջը՝ «Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումը կհանգեցնի աղքատության մակարդակի բարձրացմանը, որի հետևանքով ծանր իրավիճակում կհայտնվեն ոչ միայն աշխատողները, այլ նաև ուսանողները, որոնց զգալի մասը ուսում են ստանում Երևանում և նույնպես օգտվում են հասարակական տրանսպորտից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն 2023թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի միջին չափը կազմում է 46 091.3 դրամ, իսկ ՀՀ առողջապահության նախարարության մեթոդաբանությամբ հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2023թ. IV եռամսյակի դրությամբ կազմում է 75897.4 դրամ:

Հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումն ավելի կխորացնի սոցիալապես ծանր վիճակում գտնվող կենսաթոշակառուների վիճակը, որոնց կենսաթոշակի չափը զգալի ցածր է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից :

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ դեռևս 1995 թվականից հռչակվել է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն:

Որպես սոցիալական պետության հիմնական բաղադրիչ պետք է առանձնացնել մարդկանց սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության համար օրենսդրական երաշխիքների ապահովումը:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունում չի կիրառվում դեռևս 2004 թվականին ընդունված «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-ժողովրդագրական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը, սկսած 2004թ.-ից պետք է հաշվարկվեր ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով մշակվող և նրա կողմից հաստատած մեթոդական հանձնարարականների հիման վրա:

Կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծությունը պետք է հիմք հանդիսանար նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման համար, իսկ նրանց մեծության միջև համամասնությունները յուրաքանչյուր տարի պետք է արտացոլվեին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում:

ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» բնութագրող տեղեկատվական զեկույցների «Հետաքրքրաշարժ

վիճակագրություն» բաժնում ընդգրկված ՀՀ առողջապահության նախարարության և Համաշխարհային բանկի մեթոդաբանություններով հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղները ոչ մի իրավական ակտով սահմանված չեն և չեն կարող հիմք հանդիսանալ նվազագույն ամսական աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման համար:

Ակնհայտ է, որ հասարակական տրանսպորտի համակարգում կատարված փոփոխություններից հետո հասարակական տրանսպորտը չի ապահովում քաղաքացիների համար սպասարկման բավարար որակ:

Հետևաբար, մինչև վերոնշված իրավական ակտերի կիրառումը և հասարակական տրանսպորտի սպասարկման որակի բարձրացումը, հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացումն անընդունելի ենք համարում:

Սոցիալական արդարության համաշխարհային օր

Սոցիալական արդարությունը սոցիալական կայունության և գլոբալ բարեկեցության հիմքը:
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համագործակցությամբ փետրվարի 20-ին տեղի է ունեցել «Սոցիալական արդարությունը Հայաստանում» թեմայով կլոր-սեղան քննարկում:
Միջոցառմանը ելույթներով հանդես են եկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Աշխատանքի միջազգային կազմակերպության ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանը:

Անդրադառնալով օրվա խորհրդին՝ Էլեն Մանասերյանն իր ելույթում ընդգծեց Հայաստանի Հանրապետության՝ սոցիալական արդարության կոալիցիային պաշտոնապես միանալուց հետո առաջին համատեղ պաշտոնական միջոցառման կարևորությունը: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը նշեց, որ չնայած նրան, որ այս օրը նշում ենք գլոբալ ճգնաժամերի ֆոնին, կարևոր է արդար և հավասար պայմանները բոլորի համար, և սոցիալական արդարության հասնելու ճանապարհին չեն կարող ուշադրությունից դուրս մնալ աշխատավայրում առողջ և անվտանգ պայմանները, աշխատողների համար հավասար իրավունքներն և հավասար հնարավորությունները, Արցախից բռնի տեղահանվածների համար անխտրական միջավայրի ձևավորումը:
Քննարկման շրջանակում անդրադարձ է կատարվել նաև աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության մեխանիզմներին, Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակին և օրենսդրական փոփոխություններին:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը
https://www.youtube.com/watch?v=k8Qvy4s9eB4

Երևանի քաղաքապետարանի պատասխանը ՀԱՄԿ-ի՝ հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ գրությանը

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսիի 1

№ 03.2/35596-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ
ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մանասերյան,

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հղված Ձեր 16.02.2024թ. թիվ 05-01/5 գրության՝ տեղեկացնում եմ, որ տրանսպորտային համակարգի համալիր բարելավման ծրագրով նախատեսված է շարժակազմի ամբողջական բարելավում, երթուղիների փոփոխություն, ինչպես նաև միասնական տոմսային համակարգի ներդրում, որտեղ կիրառվելու են տարատեսակ տոմսային կրիչներ և ճկուն տոմսային փաթեթներ՝ տարբեր խմբերին պատկանող ուղևորների պահանջները բավարարելու համար:

Տոմսային փաթեթների (տարիֆային պլանների) գնային քաղաքականությունը դեռ քննարկման փուլում է: Ձեր դիմումը ևս կդիտարկվի այդ քննարկումներում:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Ս.Մանուկյան
«Երևան քաղաքի կառավարման
տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ
Հեռ.՝ 011-514-700

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աջակցությամբ Արցախից բռնի տեղահանված և Հայաստանում աշխատողների արհեստակցական կազմակերպության հիմնադիր համաժողովը

2024թ. փետրվարի 16 ին կայացավ Բռնի տեղահանված անձանց/աշխատողների արհմիութենական կազմակերպության հիմնադիր համաժողովը, որն իրականություն դարձավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի գործուն աջակցությամբ։

ՀԱՄԿ-ը այս ամիսների ընթացքում իրականացրել է հումանիտար աջակցության ծրագրեր, այժմ հերթը բռնի տեղահանված մեր հայրենակիցներին ՀՀ աշխատաշուկայում ինտեգրելն է:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով այս հղմանը
https://tinyurl.com/4hw3ntzu

3F Ինթերնեյշնելի խորհրդատու Տոբիաս Բավնսգաարդի այցելությունը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

3F Ինթերնեյշնելի խորհրդատու Տոբիաս Բավնսգաարդը 2024 թվականի փետրվարի 26-ից 28-ը ճանաչողական այցելություն է կատարել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա, որի ընթացքում հանդիպել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ճյուղային միությունների նախագահներին և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի մշտական գործող աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով և երիտասարդության հարցերով հանձնաժողովների նախագահների հետ:

Սեմինար Հայաստանի տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթեր» հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ փետրվարի 17-ից 18-ը կազմակերպել էր Հայաստանի տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար սեմինար «Արհմիության անդամակցության շարժառիթների բարձրացումը» թեմայով:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am